

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ 3-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Posted on December 10, 2011 by Keghart

**«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը
քո հավաքական ուժի մեջ է:»
Եղիշե Չարեանց**

Category: [Opinions](#)



10 Դեկտեմբեր 2011



2011 թուականի Դեկտեմբերի 10-ին Սելրի մէջ (Փարիզ) կայացաւ Արեւմտահայոց Երրորդ Համագումարը: Ներկայ էին Օսմանեան կայսրութեան նախկին հայ քաղաքացիներու ժառանգներ, ներառեալ հայրենակցական միութիւններու պատուիրակներ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, Ֆրանսայէն, Անգլիայէն, Արժանթինէն, Աւստրիայէն, Գանատայէն, Չուիցերիայէն, Հայաստանի Հանրապետութենէն եւ Ռուսաստանէն:

Համագումարի բացման առթիւ բարեմաղթանքի խօսքով հանդէս եկան Պարթեւ Վրդ. Բարսեղեանը, Մխիթարեան Միաբանութենէն Ծայր. Վրդ. Յարութիւն Պզտիկեանը եւ Ֆրանսայի մօտ ՀՀ դեսպանութեան դեսպանի տեղակալ Պրն. Աշոտ Ալեքսանեանը:

Համագումարը հիմնեց Արեւմտահայերու հասարակական ոչ-կառավարական, ոչ-շահութաբեր կազմակերպութիւն՝ “Արեւմտահայոց Ազգային Համագումար” կազմակերպութիւնը, ընդունեց անոր կանոնադրութիւնը, ընտրեց Դոկտ. Սուրէն Սերայտարեանը իբրեւ կազմակերպութեան Նախագահ, Պրն. Կարէն Միքայէլեանը, Տիկ. Սօնա Եագուպեանը եւ Գեներալ Նորատ Տէր-Գրիգորեանցը իբրեւ Փոխ Նախագահներ, գործադիր մարմնի “Արեւմտահայոց Ազգային Գործադիր Խորհուրդի” 24 անդամներ եւ հաստատեց կազմակերպութեան 2012-2013 թթ գործունեութեան ծրագիրը:

“Արեւմտահայոց Ազգային Համագումար”ի առաջնահերթ նպատակն է գործունեութեան այնպիսի ծրագիրներու մշակումը, որոնք հնարաւորութիւն կ'ընձեռնեն պաշտպանել արեւմտահայոց շահերն ու իրաւունքները, որոնք ոտնահարուեցան ոչ միայն 1914 թ. ընդունուած բարենորոգումներու ծրագիրները չիրագործելու պատճառով, այլ առաւել եւս օգտուելով պատերազմական վիճակէն, թրջական իշխանութիւններու նոր ժամանակներու առաջին ցեղասպանութեան գործադրման հետեւանքով, որ իսկեց մէկուկէս միլիոն հայերու կեանքը եւ առաջնորդեց հարիւր հազարաւորներու վտարման իրենց երկրէն, ուր անոնք կը բնակէին հազարամեակներ շարունակ:

Նոյնիսկ Մեծ Եղեռնէն ետք հնրաւորութիւն կար արդարութեան վերահաստատման համար: Կոնստանդնուպոլսոյ դատարանը 1919-ին դատապարտեց ցեղասպանութեան կազմակերպիչները, իսկ 1920 թ. Օգոստոսի 10-ի Սելրի դաշնագիրով մեծ տերութիւնները և նմանապէս Թուրքիան ճանչցան Հայաստանի անկախութիւնը Վանի, Պիթիսի, Երզրումի եւ Տրապիզոնի նահանգներու սահմաններուն մէջ:

Ներկայ պայմաններուն տակ, երբ պաղ պատերազմը աւարտած է, կը ձեւաւորուի նոր համաշխարհային համակարգ մը, երբ վերականգնուած է հայկական պետականութեան անկախութիւնը եւ ազատագրուած է Արցախը, հայութեան առջեւ կը բացուին նոր հնարաւորութիւններ՝ պայքարելու ի ինդիր ընդհատուած Հայոց հարցի արդարացի

Լուծման:**Արդ՝ “Արեւմտահայոց Ազգային Համագումարը”**

- Կը ծրագրէ տանիլ հետեւողական աշխատանք՝ հասնելու համար ճանաչումի ազգային ու միջազգային ասպարեզներու վրայ իբրեւ արեւմտահայոց լիազօր ներկայացուցչական մարմին ընդունուելուն, ընդհուպ մինչեւ անոր ՄԱԿ-ի Տնտեսական եւ Սոցիալական Խորհրդին մէջ գրանցումը,

Միաժամանակ

- Պիտի աջակցի եւ համագործակցի այն գիտահետազօտական եւ համալսարանական հաստատութիւններուն հետ, որոնք կ'առընչուին ցեղասպանութեան եւ անոր հետեւանքներուն հետ,

- Պիտի ծաւալէ աշխոյժ գործնելութիւն՝ ողողած հայկական քաղաքակրթութեան, մշակութային եւ ճարտարապետական արժէքներու պահպանման եւ վերականգման համար,

- Հետեւողական աշխատանք պիտի տանի յայտնաբերելու եւ հաշուարկելու անհատական եւ հաւաքական վնասները, որոնց ենթարկուեցաւ հայ ժողովուրդը 1915 թուականէն սկսեալ, եւ պիտի կազմակերպէ ու ծաւալէ միջազգային իրաւագետներու գործունեութիւն՝ նպատակ ունենալով դատական հայց ներկայացնել ազգային, տարածաշրջանային եւ միջազգային դատարաններուն,

- Պիտի հիմնէ եւ աջակցի զարգացնել իր մասնաճիւղերը հայ համայնքներու մէջ, իր ներկայացուցչութիւնը ապահովելու համար ժողովրդավարական (դեմոկրատական) միջոցներով, հաշուի առնելով հայ համայնքներու առանձնայատկութիւնները,

- Եւ իր տեւողութեան ու գործունեութեան ընթացքին ջանք պիտի չխնայէ հաստատելու համագործակցութիւն Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն հետ Հայկական հարցի հետապնդման գործին մէջ՝ աշխատանքի բաժանում եւ դերերու բաշխում իրագործելու համար, ի նպաստ համատեղ այնպիսի ծրագիրներու մշակումին եւ իրագործման, որոնք կ'երաշխաւորեն համայն հայութեան ապահով հեռանկարային զարգացումն ու հզօրացումը:

Սեւր, 10 Դեկտեմբեր 2011

